

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ԲՆ-ԴՇ-18/09**

ք. Երևան

« 12 » « փետրվարի » 2018թ.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Հ.Հովհաննիսյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ձիկատար» բնապահպանական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Հ.Ղուկիջանյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1717-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ձիկատար» պետական արգելվալայրի պահպանություն, գիտական ուսումնասիրություններ» ծրագրի՝ բաժին 05, խումբ 04, դաս 01, ծրագիր 09 (բնության հատուկ պահպանվող տարածքներում, ազգային պարկերում, պետական արգելոցներում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական միջոցառումների իրականացում, այսուհետ՝ Ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1. Սույն պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված՝ մինչև **15 603 800 (տասնհինգ միլիոն վեց հարյուր երեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ** գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:
- 1.2. Ծրագրով նախատեսված Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի Հավելված N^{բ1}-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

- 2.1. **Պետական մարմնին իրավունք ունի՝**
 - 2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.
 - 2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատուց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.
 - 2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝
 - ա) Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,
 - բ) Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),
 - գ) իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.
 - 2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:
- 2.2. **Կազմակերպությունն իրավունք ունի՝**
 - 2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.
 - 2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:
- 2.3. **Պետական մարմինը պարտավոր է՝**
 - 2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.
 - 2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորիգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.
 - 2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.
 - 2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 5 օրացուցային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը:
- 2.4. **Կազմակերպությունը պարտավոր է՝**
 - 2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվառումը հաշվապահական հաշվառման վարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան.



- 2.4.2. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.
- 2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.
- 2.4.4. Պետական մարմնին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին աճողական հաշվետվություններ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-ը, իսկ 4-րդ եռամսյակինը՝ մինչև դեկտեմբերի 15-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ 20-օրյա ժամկետում ամփոփ հաշվետվություն.
- 2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.
- 2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.
- 2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան.
- 2.4.8. սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում գոյացած խնայողություններն ուղղել իր կանոնադրական գործառույթների իրականացմանը՝ նախապես համաձայնեցնելով Պետական մարմնի հետ:

3. Մոնիթորինգը

- 3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
- 3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
- 3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:
- 3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
- 3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

- 4.1. Սույն պայմանագրի Հավելված №2-ով հաստատված, տվյալ եռամսյակին բաժին ընկնող գումարը յուրաքանչյուր ամսվա առաջին 5 աշխատանքային օրվա ընթացքում, հավասար մասնաբաժիններով Պետական մարմինը փոխանցում է Կազմակերպության բանկային հաշվին՝ որպես տվյալ եռամսյակի կանխավճար:
- 4.2. Եթե Կազմակերպությունը տվյալ եռամսյակի համար նախատեսված միջոցառումները
 - ա) իրականացրել է ամբողջությամբ և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվություն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.
 - բ) ամբողջությամբ չի իրականացրել, ապա կիրառվում է սույն պայմանագրի 2.1.2 և (կամ) 2.4.6 կետերով սահմանված պայմանները և իրականացված միջոցառումների արժեքի չափով Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, իսկ հաջորդ կանխավճարը վճարվում է չիրականացված միջոցառման չափով պակաս և սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.
 - գ) իրականացրել է նախատեսվածից ավելի և, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով, իսկ ավել իրականացված միջոցառման չափով վճարումն իրականացվում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 20-ը, սակայն ոչ ավելի սույն պայմանագրի 1.1 կետով սահմանված գումարից:

5. Կողմերի պատասխանատվությունը

- 5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է ստացված ֆինանսական աջակցության գումարները չիրականացված միջոցառման չափով վերադարձնել Պետական մարմնին և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

- 6.1. Սույն պայմանագրի պայմանները տարածվում են 2018 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:



7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

- 7.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու սույն պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ


- 8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը (Հավելված №2) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:
- 8.2. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
- 8.3. Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում գոյացած խնայողությունները կազմակերպությունը ուղղում է իր կանոնադրական գործառույթների իրականացմանը:
- 8.4. Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ: Սույն պայմանագրի Հավելվածներ №№1-ը և 2-ը համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:
- 8.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

«ՀՀ բնապահպանության նախարարություն
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011006260
ՀՎՀՀ 02507198

«ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար
ՀՀ Հովհաննիսյան



(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ
Տավուշի մարզ, գ.Կողբ
«Արդշինբանկ» ՓԲԸ «Նոյեմբերյան» մ/ճ
ՀՀ 247680022784
ՀՎՀՀ 07401434

«Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն

Հ. Ղուլիջանյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված № 1
«*ԲԸ*» «Վեներվարի» 2018թ. կնքված
№ ՀՀ-ԲԸ-ԴՇ-18/09 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ քննարկողի վանության նախարարության
աջիջատարի կազմի ղեկավար

Վ. Հովհաննիսյան

(նախագրություն)

Կ.Տ.

ԿԱՐՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Ջիվատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն

Վ. Ղուլիջանյան

(ստորագրություն)


Կ.Տ.

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN Ը/Կ	Իրականացվելիք միջոցառման					վերջնա- ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները		
1	Բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանություն, քննության ժառանգության պահպանություն	«Ջիվատար» պետական արգելավայրի տարածքներում և պահպանման գոտու տարածքներում՝ ա) պահպանության ընդհանուր միջոցառումների իրականացում, բ) հարող բնակավայրերի բնակչության շրջաններում Էկոլոգիական իրազեկություն, էկոլոգատիրապետություն Համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ ներգրավելով նրանց պետական արգելավայրի պահպանության և հակահրդեհային միջոցառումների իրականացմանը: Հողի հակահրդեհային հանքայնացում ձեռքով Գարնանային (2-րդ, եռամսյակ) և աշնանային (4-րդ եռամսյակ) հերթական վերստուգիչ ստուգումների արդյունքների ակտիվում	Պահպանության միջոցառումներ, աշխատակիցների կողմից բացատրական և քննարկական միջոցառումների կազմակերպում և իրականացում, արդյունքների ամփոփում ու վերլուծություն Հողի հակահրդեհային հանքայնացում ձեռքով (հողի վերին շերտի մաքրում	Պատշաճ պահպանություն, հակերության իրազեկության պատշաճ մակարդակի ապահովում	31.12.2018թ	13 742 400	
2	Հավաիրդեհային միջոցառումներ	Համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ ներգրավելով նրանց պետական արգելավայրի պահպանության և հակահրդեհային միջոցառումների իրականացմանը: Հողի հակահրդեհային հանքայնացում ձեռքով Գարնանային (2-րդ, եռամսյակ) և աշնանային (4-րդ եռամսյակ) հերթական վերստուգիչ ստուգումների արդյունքների ակտիվում	Հողի հակահրդեհային հանքայնացում ձեռքով (հողի վերին շերտի մաքրում	Համագործակցված պահպանության ապահովում և հրդեհի կանխում	15.11.2018թ	200 000	
3	Արգելավայրի տարածքում հերթական ակտուալիզ ստուգումների անցկացման միջոցառումներ	Դեղորոգման գործառույթներ ուսումնասիրություններ կրճարշիկային վերականգնման առանձնահատկությունների ուսումնասիրություններ հատկապես ծառատներում	Ապօրինի հատումների կանխարգելում, բացահայտում և հաշվետվությունների կազմում	Իրականացված ստուգումներ, ներկայացված ստուգման արձանագրություններ	31.12.2018թ	100 000	
4	Գիտական ուսումնասիրություններ	Դեղորոգման գործառույթներ ուսումնասիրություններ կրճարշիկային վերականգնման առանձնահատկությունների ուսումնասիրություններ հատկապես ծառատներում	Հայաստանի անտառներում սերմային և կրճարշիկային վերականգնման ուսումնասիրություններ և գիտական հիմնադրված առաջարկություններ	Գիտական միջոցառումների հաշվետվությունների ակտիվություն:	31.12.2018թ	200 000	
5	Կենսաբազմազանության պահպանության, հարստացման և գործնական ուսուցումների կազմակերպման նպատակներով հիմնված տնկարանային ստուգության դպրոց հողամասում տնկանյութի աճեցում և խնամք	Սևտուսյին, գերազարդային և անտառային պտղատու ծառաբուսականությունների տնկանյութի աճեցում, համապատասխան մասնագետների և ուսանողների համար գործնական ուսուցումների կազմակերպում	Սևտուսյին, գերազարդային հանքայնացում և սերմային տնկանյութի աճեցում և խնամք	Սևտուսյին տարածքում սահմանված քանակի տնկանյութի ակտիվություն, խնամված և պահպանված տնկարան	15.11.2018թ	1361 400	
ԸՆԴԱՄԵՆԸ							15 603 800

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ բնակարարության նախարարության
անշրջանակազմի ղեկավար
Հ. Տոփչանյան




(պատրաստություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հիկատար» բնակարարական կենտրոն» ՊՈԱԿ-ի
ունեղեն

Հ. Ղուկեանյան



(պատրաստություն)
Կ.Տ.

ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագիր

Ծրագրային դասիչ	Անվանումը	Ոչ ֆինանսական ցուցանիշներ		Ֆինանսական ցուցանիշներ													
		Սկզբնական արժեք	Վերջնական արժեք	I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի	I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի						
1155	ԱՍԻ 12 Նկարագրություն Բնության հատուկ պահպանվող տարածքներում, ազգային պարկերում, պետական արգելոցներում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական միջոցառումների իրականացում	2	2	150	150	150	150	150	150	150	150	150	150	150	150	150	150
Քանակական	Զափոթիչներ Սարքու գործունեության հետևանքով արգելված հողերի ընկած հիտահատվածների հավասարաչափությունը խախտող գործընթացների կանխարգելման ապահովում, հս Սարքու գործունեության հետևանքով արգելված հողերի ընկած հիտահատվածների հավասարաչափությունը խախտող գործընթացների կանխարգելման ապահովում, հս Սարքու գործունեության հետևանքով արգելված հողերի ընկած հիտահատվածների հավասարաչափությունը խախտող գործընթացների կանխարգելման ապահովում, հս	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Որակական	Մշակված չէ																
Ժամկետայնության	Աշխատանքների կատարման ժամկետը																
Իրականացվող միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)				X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X	X
Ծրագրի (ծրագրերի) ընդհանուր արժեքը	1155 Բնական պաշարների կատարման և պահպանման, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության միջոցառումներ																
Վերջնական արդյունքի նկարագրություն	Բնության և կենդանիների պահպանություն և վերականգնողական միջոցառումներ																
Միջոցառումն իրականացնողի անվանումը	«Հիկատար» բնակարարական կենտրոն» ՊՈԱԿ																